ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-14/3-1

ք. Երևան «27» հունիսի 2018 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Բուկինիստ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Խ. Վարդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **454,374 (չորս հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր յոթանասունչորս)** ՀՀ դրամ, ընդ որում սույն պայմանագրով նախատեսված 5, 13, 14, 16, 17, 19, 20, 22, 28-32, 34, 36, 40-42, 44, 45, 47-51, 53-55, 57-59, 61, 65, 66, 69-72, 74, 76, 78, 79-րդ անվանատողերի մասով մասնակիցը վճարում է **ԱԱՀ**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերություններ

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա

ստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման

պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը:**

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Բուկինիստ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք.Երևան, Մաշտոցի պող. 20 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1150000443760200 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 02517432 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| **Վ. ՀԱՄԲԱՐՅԱՆ** | **Խ. ՎԱՐԴԱՆՅԱՆ** |

Հավելված N 1
ԳՀԱՊՁԲ-14/3-1 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/հ | Այ Էս Բի Էն ISBN | վերնագիր | հեղինակ | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | ծագման երկիրը | էջերի քանակ | տարեթիվ | լեզու | հրատարակիչ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1. Գրադարանի գրքեր, այդ թվում** | | | | | | | | | | |
| 1 | | Ըն ինթրադաքշըն թու ԱյԷլԹՍ. Գրամըր | Ամիր Հաջիալի | չունի | | Հայաստան | 592 | 2015 | Անգլերեն | |
| 2 | | Ըն Ինթրադաքշըն թու ԱյԷլԹՍ. Վոքաբյուլըրի | Ամիր Հաջիալի | չունի | | Հայաստան | 296 | 2015 | Անգլերեն | |
| 3 | 978-0-07-177610-3 | Քոնքըրինգ ՋիՄԱԹ. մաթ ընդ ինթըգրեյթ ռիզընինգ | Ռոբերտ Մոյեր | չունի | ՄըքԳրոու-Հիլլ | ՄԹ | 236 | 2016 | Անգլերեն | ՄըքԳրոու-Հիլլ |
| 4 | 978-9939-68-408-6 | Դիքշընըրի ըվ Իդիըմաթիք Քալքս | Սարկիսյան Ա. | չունի | Զանգակ-97 | Հայաստան | 176 | 2015 | Հայերեն, անգլերեն | Զանգակ-97 |
| 5 | 978-5-8330-0268-1 | Ան ֆղանսե, սիլ վու փլե = Ֆրանցուզսկիյ յազիկ դլյա դելովոգո օբշչենիա | Սիդորովա Ի. Ն. Ի դր., Լազարևա Ի. Բ., Բազ Ա. Ա. | չունի | ԳԻՍ | ՌԴ | 268 | 2008 | Ռուսերեն | ԳԻՍ |
| 6 | 978-99941-854-6-7 | Ֆղանսե. Մեթոդ է փղաքթիք. 1 մաս | Թունյան Գ., Պետրոսյան Շ., Օհանյան Լ. | չունի | Ան-Ջոն | Հայաստան | 416 | 2008 | Ֆրանսերեն | Ան-Ջոն |
| 7 | 978-99941-854-6-8 | Ֆղանսե. Մեթոդ է փղաքթիք. II մաս | Թունյան Գ., Պետրոսյան Շ., Օհանյան Լ. | չունի | Ան-Ջոն | Հայաստան | 413 | 2008 | Ֆրանսերեն | Ան-Ջոն |
| 8 | 978-9939-53-547-0 | Լոմ է Սոն Էնվիրոմըն/ Թեքսթ է էքզեզիս | Խաչատրյան Ս. | չունի | Հեղ. Հրատ. | Հայաստան | 320 | 2009 | Ֆրանսերեն | Հեղ. Հրատ. |
| 9 | 978-0-07-159246-8 | Փըրֆեքթ ֆրեյզիզ ֆոր դը Թոյֆլ Սփիկինգ ընդ Ռայթինգ Սեքշընս | Ռոբերտա Սթեյնբերգ | չունի | ՄըքԳրոու-Հիլլ | ՄԹ | 271 | 2008 | Անգլերեն | ՄըքԳրոու-Հիլլ |
| 10 | 978-9939-9009-8-8 | Փրաքթիս դը Լենգվիջ ըվ Նյուփեյփր | Թումանյան Էս. | չունի | Հայրապետ | Հայաստան | 384 | 2011 | Անգլերեն | Հայրապետ |
| 11 | 978-5-8084-1568-3 | Ադրբեջաներենի դասագիրք | Մովսիսյան Լ. | չունի | ԵՊՀ | Հայաստան | 240 | 2012 | Հայերեն | ԵՊՀ |
| 12 | 987-9939-850-12-2 | Անգլերեն-հայերեն Հայերեն -անգլերեն բառարան | Գրիգորյան Խ. | չունի | Անկյունաքար | Հայաստան | 626 | 2016 | Հայերեն, անգլերեն | Անկյունաքար |
| 13 | 978-5-17-094482-8 | Սկազած պոչտի տո ժե սամոյե. Օպիտի պերեվոդա | Էկո Ու. | չունի | ԱՍՏ | ՌԴ | 736 | 2015 | Ռուսերեն | ԱՍՏ |
| 14 | 978-5-9765-2376-0 | Օսնովի ռասպեշնոյ կոմունիկացիի. Ուչեբնոյե պոսոբիե | Շունեյկո Ա. Ա., Ավդեենկո Ի. Ա. | չունի | Ֆլինտա | ՌԴ | 190 | 2016 | Ռուսերեն | Ֆլինտա |
| 15 | 978-9939-850-10-8 | Անգլերեն-հայերեն-ռուսերեն փիլիսոփայական բառարան | Դավթյան Գ | չունի | Անկյունաքար | Հայաստան | 396 | 2015 | Անգլերեն Հայերեն Ռուսերեն | Անկյունաքար |
| 16 | 978-5-9614-5051-4 | Կորպորատիվնայա սիստեմա ուպրավլենիա պրոեկտամի: Օտ մետոդոլոգիի կ պրակտիկե | Լյաշուկ Ա., Մաքսին Դ., Նուգայբեկով Ռ. | չունի | Ալպինա Պաբլիշերզ | ՌԴ | 236 | 2015 | Ռուսերեն | Ալպինա Պաբլիշերզ |
| 17 | 978-5-9963-0237-6 | Մենեջմենթ վ սֆերե ինֆորմացիոննոյ բեզոպասնոստի | Անիսիմով Ա. Ա. | չունի | Բինոմ | ՌԴ | 176 | 2014 | Ռուսերեն | Բինոմ |
| 18 | 978-5-8080-1192-2 | Պետական հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները | Սարգսյան Կ. | չունի | Գիտություն | Հայաստան | 416 | 2016 | Հայերեն | Գիտություն |
| 19 | 978-5-9916-3110-5 | Ուպրավլենիյե ֆինանսովըմի ռիսկամի վ սիստեմե էկոնոմիչեսկոյ բեզոպասնոստի | Պիմենով Ն. Ա. | չունի | Յուրայտ | ՌԴ | 413 | 2014 | Ռուսերեն | Յուրայտ |
| 20 | 978-5-406-04352-3 | Վվեդենիե վ կուրս միրովոյ էկոնոմիկի. Էկոնոմիչեսկայա գեոգրաֆիա զարուբեժնիխ ստրան | Սմիրնով Ե. Ն., Սմագուլովա Ս. Մ. | չունի | ԿնոՌուս | ՌԴ | 320 | 2015 | Ռուսերեն | ԿնոՌուս |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 978-5-238-02121-8 | Օրչյայա էկոնոմիչեսկայա, սոցիալնայա ի պոլիտիչեսկայա գեոգրաֆիա. Պրակտիչեսկիյ կուրս | Գորոխով Ս. Ա., Ռոգոտեն Ն. Ն. | չունի | ՅՈՒՆԻՏԻ | ՌԴ | 271 | 2015 | Ռուսերեն | ՅՈՒՆԻՏԻ |
| 22 | 978-5-9710-1562-8 | Պոլիտիչեսկիե ռինկի ի էկոնոմիչեսկայա պոլիտիկա | Աֆոնցև Ս. Ա. | չունի | Լենանդ | ՌԴ | 384 | 2015 | Ռուսերեն | Լենանդ |
| 23 | 978-9939-9055-7-0 | Տարածքային միավորների արտաքին տնտեսական կապերը | Խաչատրյան Լ. | չունի | Օր-Դար | Հայաստան | 208 | 2015 | Հայերեն | Օր-Դար |
| 24 | 978-9939-750-55-2 | Աշխարհագրություն. Ուսումնաօժանդակ ձեռնարկ | Խաչատրյան Ա. | չունի | Էդիթ Պրինտ | Հայաստան | 365 | 2016 | Հայերեն | Էդիթ Պրինտ |
| 25 | 978-99941-0-729-2 | Հայաստանի աշխարհագրություն: Ուսումնական ձեռնարկ | Մանասյան Մ, Սայադյան Հ. | չունի | Տիգրան Մեծ | Հայաստան | 388 | 2016 | Հայերեն | Տիգրան Մեծ |
| 26 | 978-9939-854-31-1 | Երկրի փոփոխությունները պրեցեսիոն հավասարեցումը, գալակտիկական անցում | Ռեյչել Սել | չունի | հեղ. Հրատ. | Հայաստան | 342 | 2016 | Հայերեն | հեղ. Հրատ. |
| 27 | 978-99941-0-722-3 | Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն: Ուսումնական ձեռնարկ | Մանասյան Մ, ՄԱնասյան Հ. | չունի | Տիգրան Մեծ | Հայաստան | 320 | 2016 | Հայերեն | Տիգրան Մեծ |
| 28 | 978-9939-850-28-3 | Ֆիզիկա և փիլիսոփայություն | Հայզենբերգ Վ. | չունի | Անկյունաքար | Հայաստան | 333 | 2016 | Հայերեն | Անկյունաքար |
| 29 | 978-5-496-00621-7 | Ադմինիստրիրովանիյե Մայքրոսոֆթ Վինդոզ Սերվեր 2012 | Լինն Ս. | չունի | Պիտեր Պրես | ՌԴ | 304 | 2014 | Ռուսերեն | Պիտեր Պրես |
| 30 | 978-5-496-01395-6 | Սովրեմեննիյե օպերացիոննիյե սիստեմի | Տանենբաում Է. Ս. | չունի | Պիտեր Պրես | ՌԴ | 1120 | 2015 | Ռուսերեն | Պիտեր Պրես |
| 31 | 978-5-699-94995-3 | ԿենԿեն. Յապոնսկայա սիստեմա տրենիրովկի մոզգա | Միյամոտո Տ. | չունի | Էկսմո | ՌԴ | 192 | 2017 | Ռուսերեն | Էկսմո |
| 32 | 978-5-91671-698-6 | Վոյնա | Բարչենկո Ա. | չունի | Ալպինա Պաբլիշեր | ՌԴ | 352 | 2017 | Ռուսերեն | Ալպինա Պաբլիշեր |
| 33 | 978-9939-0-2125-6 | Վիզովի սովրեմեննիխ վոյն: Ակտուալնիե վոպրոսի մեժդունառոդնո-պրավովոգո ռեգուլիրովանիյա նովիխ սրեդստվ | Երեմյան Լ. | չունի | Տիգրան Մեծ | Հայաստան | 168 | 2017 | Ռուսերեն | Տիգրան Մեծ |
| 34 | 978-5-386-09707-3 | Ստրատագեմի վոյեննոգո իսկուստվա. Սուն-Ցզի | Մալյավին Վ. Վ. | չունի | Ռիպոլ Կլասիկ | ՌԴ | 0 | 2017 | Ռուսերեն | Ռիպոլ Կլասիկ |
| 35 | 978-5-9909882-0-0 | Տուրեցկայա վոյեննայա մաշինա: սիլա ի սլաբոստ | Բարաբանով Մ. Ս. | չունի | Մոսկվա | ՌԴ | 0 | 2017 | Ռուսերեն | Մոսկվա |
| 36 | 978-5-9925-0598-6 | Վվեդենիյե վ վոստոկովեդենիե. Օբշչիյ կուրս | Զելենյով Ե. Ի. | չունի | Կարո | ՌԴ | 584 | 2017 | Ռուսերեն | Կարո |
| 37 | 978-0-19-062458-3 | Դինայըլ ըվ Վայլընս: Օթոման Փասթ, Թըրքիշ Փրեզընթ, ընդ Քըլեքթիվ Վայլընս Ըգենսթ դը Արմինիընս | Ֆաթմա Մյուգ Գոչեկ | չունի | Օքսֆորդ | ՄԹ | 656 | 2015 | Անգլերեն | Օքսֆորդ |
| 38 | 978-0-7656-4050-5 | Ֆորին Փոլըսի ըվ դը Ռիփաբլիք ըվ Ազըրբեյջան | Ջամիլ Հասանլի | չունի | Ռոութլեջ Թեյլըր ընդ Ֆրենսիս Գրուփ | ՄԹ | 446 | 2016 | Անգլերեն | Ռոութլեջ Թեյլըր ընդ Ֆրենսիս Գրուփ |
| 39 | 978-0-8147-9893-5 | Դը Ռայզ ընդ Ֆոլ ըվ դը Քոքեյժըն Ռեյս: Ը Փըլիթիքլ Հիսթըրի ըվ Ռեյշըլ Այդենիթիի | Բաում Բ. | չունի | Նյու Յորք Յունիվերսիթի պրեսս | ՄԹ | 342 | 2008 | Անգլերեն | Նյու Յորք Յունիվերսիթի պրեսս |
| 40 | 978-5-9524-5251-0 | Արաբի վ միրովոյ իստորիի. Ս դոիսլամսկիխ վրեմյոն դո ռասպադա կոլոնիալնոյ սիստեմի | Լյուիս Բ. | չունի | Ցենտրպոլիգրաֆ | ՌԴ | 223 | 2017 | Ռուսերեն | Ցենտրպոլիգրաֆ |
| 41 | 978-5-9614-6186-2 | Բիտվի զա եդու ի վոյնի կուլտուր: Տայնիյե դվիգատելի իստորիի | Նիլոն Տ. | չունի | Ալպինա Պաբլիշեր | ՌԴ | 224 | 2017 | Ռուսերեն | Ալպինա Պաբլիշեր |
| 42 | 978-5-227-07549-9 | Ժենշչինի ու վլաստի. Լեգենդարնիյե լիչնոստի, տվորիվշիյե իստորիյու | Մարտյանովա Լ. Մ., Մուդրովա Ի. Ա. | չունի | Ցենտրպոլիգրաֆ | ՌԴ | 255 | 2017 | Ռուսերեն | Ցենտրպոլիգրաֆ |
| 43 | 978-9939-0-1858-4 | Սփյուռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի | Գէորգ Եազըճեան | չունի | Էդիթ Պրինտ | Հայաստան | 352 | 2016 | Հայերեն | Էդիթ Պրինտ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փաստաթղթերու մեջ | | | | | | | | |
| 44 | 978-5-227-05792-1 | Բլիժնիյ Վոստոկ նա սցենե ի զա կուլիսամի | Պրիմակով Ե. Մ. | չունի | Ցենտրպոլիգրաֆ | ՌԴ | 415 | 2016 | Ռուսերեն | Ցենտրպոլիգրաֆ |
| 45 | 978-5-17-102567-0 | Վոյնա ինիմի սրեդստվամի | Բլեկվիլլ Ռ., Խարրիս Դ. | չունի | ԱՍՏ | ՌԴ | 480 | 2017 | Ռուսերեն | ԱՍՏ |
| 46 | 978-9939-0-2500-1 | Համաշխարհային աշխարհաքաղաքականություն. 12 հայացք | Սարգսյան Վ. | չունի | Հեղ. Հրատ. | Հայաստան | 208 | 2017 | Հայերեն | Հեղ. Հրատ. |
| 47 | 978-5-534-01308-5 | Գլոբալիստիկա. Էկոպոլիտոլոգիա | Կեֆելի Ի. Ֆ., Վիխոդեց Ռ. Ս. | չունի | Յուրայտ | ՌԴ | 180 | 2017 | Ռուսերեն | Յուրայտ |
| 48 | 978-5-7567-0872-1 | Դիպլոմատիչեսկայա սլուժբա զառուբեժնիխ ստրան | խմբ. Տորկունովա Ա. Վ. | չունի | Ասպեկտ-Պրեսս | ՌԴ | 400 | 2017 | Ռուսերեն | Ասպեկտ-Պրեսս |
| 49 | 978-5-386-08126-3 | Եվրազիա ի վսեմիրնոստ | Մալյավին Վ. Վ. | չունի | Ռիպոլ Կլասիկ | ՌԴ | 352 | 2015 | Ռուսերեն | Ռիպոլ Կլասիկ |
| 50 | 978-5-91671-504-0 | Իսլամսկոյե գոսուդարստվո: Արմիա տեռորա | Խասան Խ., Վայս Մ. | չունի | Ալպինա Պաբլիշեր | ՌԴ | 346 | 2016 | Ռուսերեն | Ալպինա Պաբլիշեր |
| 51 | 978-5-93165-251-1 | Մայենդորֆսկայա դեկլարացիա 2 նոյաբրյա 2008 գոդա Մ14 ի սիտուացիա վոկրուգ Նագոռնոգո Կարաբախա | Օրլով Ա. Ա. և ուրշ. | չունի | Ռուսսկայա Պանորամա | ՌԴ | 352 | 2009 | Ռուսերեն | Ռուսսկայա Պանորամա |
| 52 | 978-5-16-009534-9 | Մետոդիկա գեոէկոլոգիչեսկիխ իսսլեդովանիյ | Շենցովա Ն. Ս., Ստրեխա Ն. Լ. | չունի | Նովոյե զնանիյե | ՌԴ | 292 | 2014 | Ռուսերեն | Նովոյե զնանիյե |
| 53 | 978-5-389-11034-2 | Պարադոկս վլաստի. Կակ օբրետայուտ ի տերյայուտ վլիյանիյե | Կելտներ Դ. | չունի | ԿոԼիբրի | ՌԴ | 184 | 2017 | Ռուսերեն | ԿոԼիբրի |
| 54 | 978-5-17-087995-3 | Սինգապուրսկոյե չուդո | Լի Կուան Յու | չունի | ԱՍՏ | ՌԴ | 288 | 2017 | Ռուսերեն | ԱՍՏ |
| 55 | 978-5-906947-19-2 | Սինդիկատ. Իստորիա միռովոգո պրավիտելստվա | Խագեր Ն. | չունի | Ալգորիթմ | ՌԴ | 496 | 2017 | Ռուսերեն | Ալգորիթմ |
| 56 | 978-9939-51-957-9 | Լեռնային Ղարաբաղի (Արցախի) հանրապետ. սահմ. արժեքանական առանձն. և հետագա զարգացման հիմնախնդիրները | Հարությունյան Ա. | չունի | Անտարես | Հայաստան | 239 | 2016 | Հայերեն | Անտարես |
| 57 | 978-5-699-95316-5 | Տամոժեննիյ կոդեկս Տամոժեննոգո սոյուզա: տեկստ ս իզմենենիյամի ի դոպոլնենիյամի նա 2017գ. | խմբ. | չունի | Էկսմո | ՌԴ | 288 | 2017 | Ռուսերեն | Էկսմո |
| 58 | 978-5-94373-401-4 | Տեորիա մեժդունարոդնոգո պրավա | խմբ. Շեստակովա Գ. Ի., Տունկին Գ. Ի. | չունի | Զերցալո | ՌԴ | 416 | 2017 | Ռուսերեն | Զերցալո |
| 59 | 978-5-9614-6414-6 | Մետոդի պրինյատիա ռեշենիյ | խմբ. | չունի | Ալպինա Պաբլիշեր | ՌԴ | 208 | 2017 | Ռուսերեն | Ալպինա Պաբլիշեր |
| 60 | 978-9939-9110-4-5 | Բառագիրք. Ուղղագրություն, հոմանիշներ, հականիշներ, դարձվածքներ | Բալայան Ա., Սարգսյան Գ. | չունի | Նար պինտ | Հայաստան | 167 | 2016 | Հայերեն | Նար պինտ |
